

Նօթութիւններէն կը համառօտենք հոս անոր
բովանդակութիւնը:

Կը սկսի Ցուցակով մը 53 երեւելի Անգ-
ղիացի, Ֆրանսացի, Պարսիկ և Արաբացի
Հեղինակաց, որոնցմէ տեղեկութիւններ ա-
ռած կամ վկայութիւններ բերած է: Կը
բաժնէ տասը գրութիւններու, և երկրին հետ ազ-
գաց, կրօնից և լեզուաց վրայ աեղեկութիւն
կու տայ: Բ. Արաբաստականի անունը, ան-
ցեալ և ներկայն կը պատմէ: Գ. Դավթեմի
ընդհանուր նկարագրին և պատմութեան մէջ,
Հայերու այժմեան կացութիւնը: Դ. Հայա-
բնակ գիւղեր և գաւառներ. Մարանտ, Խոյ,
Որմիա, Սովորաբուադ, և այն, անոնց մէջ
գտնուած եկեղեցից և արձանադրութիւններ:
Ե. Խափահան, Հայոց այլ և այլ զաղթումնե-
րը. և զիհաւորապէս Շահ Արքասի պատ-
մութիւնը, Հին և նոր Զուգա նկարագրուած:
Զ. Թէհրան և անոր շրջակայք և Հայոց
հոն հաստատուիլը: Է. Համաստան, անոր
հնութիւնը և հայրանակ գիւղեր: Ը. Խօրա-
սան Նահանգը, Սագաստան և Վրիհանայ
երկիրը. Սմբատ Բագրատունայ կառավա-
րութիւնը, Հայերն, Հայ և Նստորական ե-
կեղեցիներու հետքերը: Թ. Հնդկաստանի
Հայերը և իրենց Անդիխացոց մատուցած
ծառայութիւնները: Ժ. Աղջանիստանի և
Քաջիկարի Հայերը: Յատուի անուան ցան-
կով մը կը փակէ իր երկասիրութիւնը որ
պատմական, աեղեկագրական և փիճակա-
գրական աեղեկութիւններով լի է Պարսկաս-
տանի Հայերու վրայ, աենահին ժամանակ-
ներէ մինչեւ մեր օրերը:

Յիշենք վերջապէս պարսկերէն-Հայերէն-
Փրանսերէն բառարան մ'ալ զոր նոյնապէս
ձեռադիր թողած է Գորոյեանց:

Հ. Գ. ԶՐԱՏԱՆ



ՀԱՅԿԱԿԱԼԻՆ ՀԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՄԵ

Զ ԱՏԿԱՆ և կամ ուրիշ մեծ և սրբազն
տօներ ամէն տարի հանդիսաւոր կատարուած
ժամանակ՝ ամէն ազգասէր մտաց մէջ ան-
շուշու հին քաղցր և ցանկալի յուշը և յի-
շատակը կ'արթիւնան: Եւ հիմա կարծես թէ
կը զգաս, կ'իմանաս թէ բան մը, ծէս մը,
արաբուղթիւն մը պակաս է այլ տօնախումը
հանդէններէն, և չէ այն Զատարին կամ տօնն
զոր մեր նախնից կը կատարէին: Խսկ եթէ
քրիստոնեայ Զատիկէն և տօնիրէն ալ զէպ
ի վեր սլանանք մեր ազգին հեթանոսական
խաւարին մէջ թարթափելու համար, կը տես-
նենք Համայնարհական տօներ, Աշխարհա-
ժորավանքի հանդէններ, Նախատարի տօներ: Բա-
գրեանպայ բարձրաւանդակիներու վրայ խոներ
են այրաբատեան աստուածակալ գունին,
ազգային աշխարհապահ զինուորը, հոն մըր-
ցանց կտրճաց, խաղը և վայելը հասարա-
կաց, զորս երեց հազար տարւոյ չափ կտ-
արեցին մեր նախահարք, փողը և պարք,
երգը թնդացին Բագրեանպայ բլուրներու
վրայ մինչեւ որ անոնց տակ ծածկուեցան
աներեւոյթ եղան մեր հարց:

Բայց « երբ Հայկայ և Վահագնի օրերուն
խորհրդակատար քրմապետաց տեղ փիխա-
նակեցին խաչապսակ քահանայազեաց, մե-
ծենաց վրայ եկեղեցիներ կանոնեցին. (այլ)
անոնց չորս փին և գուրսը նոյնպէս մեաց.
ընութիւնն իւր կերպարանը չփոխեց, ազգն
իր հանդէնները չփոխեց. այլ տօները սրբեց,
և փիխանակ գից՝ նուիրեց ճշմարտին Աս-
տուածոյ և Նահատակաց նորա» : Եւ այս
Նշխարեալ սրբազն այլ և սրբանացած մատ-
ցորդներէն մին էր և Մատադն, որոյ վրայ
քանի մը խօսք ըսել տանց և ըսենց հոս:

Մատադ, զոր ոմանքը կը ստուգաբաննեն,
աղ մատուցանելով օրհնուած նուէր, կընայ
նաեւ հասարակ նշանակութիւնը մատազաշ
կենանի նշանակել, կամ առջինեկ, ինչ-

պէս Երբայեցոց ալ պատուիրուած էր՝ այս-
պիսիներ նուիրել Աստուծոյ կամ քահա-
նայից: — Առունա թէպէտ հայ, բայց գործն
կամ արարողութիւնն թուի թէ սոսկ հայ-
կական կամ ազդային համարելի չէ. վասն
զի ի՞նչ է Մասաղն, բայց զոհ, ողջակէզ,
նուէր անասնոց, և այլն. արդ յայտնի է թէ
այդպիսի սրբագան արարողութիւնն մը ունէին
աշխարհիս ամէն ազգերն, և ինչ որ Մեծին
Խորովու համար կը գրէ պատմիչն Ազաթ. «Այսիսակ ցրոք և սպիտակ հոխագօք, սպիտակ
յորովք . . . զհայրենեացն պաշտամանցն
տեղիսն մեծարեր», նոյն քիչ շատ կը սսու-
գուի ամէն ազգաց համար, որոց ոմանց մէջ
նոյն իսկ մարզազոհն սովորական գարձած
էր: Ուրեմն Մասաղն, իրեն զհագործու-
թիւն, համազգային էր և համաշխարհական
հեթանոսութեան ատեն:

Բայց երբ Քրիստոսի անշէջ լոյսն ծա-
գեցաւ երկրորդ անգամ՝ Հայոց առաքելոյն
և Լուսաւորչին ձեռքով, այս Ս. Լուսաւորիչ,
ինչպէս շատ տօնեն և հանգստներ, նոյնական
այս արարողութիւնը նուիրագործեց, նոյն
իսկ ժամանակին հանգամանքներէն բռնա-
դատեալ: Վասն զի, քրոմափեաք և քուրմք
թագաւորաց ու մեծատանց նուիրած զէնելի
կենապանիները կ'ընդունէին ապրուստի հա-
մար. և երբ Հիմանսսական կրօնըն չնշուե-
ցաւ, անճարակ մնալով հարցուցին Լուսա-
ւորչի, թէ ի՞նչպէս պիտի ապրին, որովհե-
տեւ ուրիշ արտեստ չէին դիտեր. Սուրբն
ալ ահճանեց փոխանակ Հիմանսսական զո-
հից քրիստոնէական Մասաղն, առաս մասն
հանելով այն քրիստոնէացեալ քրմաց, և
յետոյ քահանայից: — Համանոն Գրիգոր
Մալ մեր Գրիգորին նման թէ Սուրբ և թէ
Մեծ, Քահանայապետ Հոսպիտ նոյն և նման
բան մը թոյլ տուած է նորագարձ Անդիաց-
ոց, ասէկ գրեթէ հազար երեք հարիւր տարի
առաջ՝ գրելով: «Յաւոր նաւակասեաց կամ
տօնից սրբոց մարտիրոսաց. . . արասցն
իրեանց տաղաւարս յատոց ծառոց շուրջ
զեկեղեցեօքն. . . և պարկեշտ իրավճանու-
թեամբ կատարեացն զտօննախբութիւնն. . .
Զոհեցն. . . զանասուն. . . ի փառ Աս-
տուծոյ առ իրեանց ուտեստ»:

Ս. Լուսաւորչայ համար ըսածնիս կը հա-
ւաստէ Ս. Սահակ իւր կանոնաց մէջ գրե-
լով թէ իր նախնեաց աւանդութենէն ա-
ռած է զայր, և ըստ կարգավրութեան իր
նախահօր (Ս. Լուսաւորչին) կը սահմանէ
որոշակի՝ թէ որ մասն կենդանուոյն տալու
է քահանայից և որն այլոց, որպէս զի հա-
կանակութիւն և անվայել ինտիր շըլլայ: —
Սակայն ժամանակէ մը ետքը, փոխանակ
զոհեալ անասնոյն բաժանելի մասանց վրայ
հակառակութիւն և անվայել ինտիրներ ըլ-
լալու, ինչպէս որ կը վախնար Ս. Սահակ,
անվայելլազոյն հակառակութիւնը և վէճք
ծագեցան Հայ ազգին և իրեն մերձաւորին,
Ասորուոյն մէջ: Մասաղն՝ «Ասորոց գայ-
թակղութեան առիթ եղաւ և Հայոց կոռի՛
անոնց հետ, ինչպէս որ անէ ետեւ ալ շատ
հեղ եղած է առիթ զայթակղութեան ի վիճի
բազմաց, գիտնոց և տղիտաց», տղիտանա-
լով որ մատաղն Հայոց, ըստ Ծնորհալոյս,
մէյմը հին քրիստոնէից ազապին, կամ ո-
ղորմութեան և սիրոյ կերակրոց նման է,
մէյմալ մասնաւոր ազգային զէպէ և հարկ
մը, որուն առաջնին իմաստը պարզագոյն կը
զնէ Յովհաննէս իմաստաէր. «Զաղն օր-
հնութեան յագապացն զենմնանս խանն»:

Իսկ Ծնորհալին՝ Ասորոց նզիմ՝ շարա-
մրտութեան մէզը փարատելու համար, որ-
չափ գեղեցիկ և պայմառ կը գրէ Մասաղն
էութեան, ի Հըեական զոհից տարբերութեան
վրայ, ցուցընելով թէ «Զիարդ արժան է
կատարել առանց նզիմ մտաց և ըստ կամացն
Ասորուոյ, զմաստաղն Զատոկին և զիշերուն-
կանի, և զենէնցեղոցն յիշառակի, և զաւե-
լորդ և զյետոյ մնեալոն ի պիտաց ի բաց
հանելով»: Հետեւարար՝ երեք մատաղ կար
Հայոց մէջ, որոց իրաքանչիւրն ալ ունէր
իրեն արարողական մասը, իրարմէ քիչ շատ
տարբերութեամբ: Մեր նախնեաց մէջ ոչ ոք
Ծնորհալոյ չափ մանրամասն գրած է այդ
մասին. վասն զի նա կը սահմանէ նաեւ
մասաղին օրհնութեան կերպն ալ. «Նախ
զգաւորիկն ասեմք. զրոշեսցէ քահանայն
զաղն՝ խաչին Քրիստոսի... և տացեն զայն
ի կերակուր գառինն... և զենցեն զնա յո-
րում տեղւոց և հանգիպի... և նորովեցն

զնա, և տացեն զմասն քահանային՝ իրբեւ զնուէր Աստուծոյ, և զայլին կերիցին... — բայ այսմ նմանութեան կատարեցին և այլոց աւրանական տօնից մատազան, և սրբոց Աստուծոյ»:

Եթեոյ կը սահմանէ առանձին կանոն ուրիշ տէրութանիման կոչուածին համար, որ յաջորդ կանոնին չափ հետաքրքրական չէ. այսինքն, «Առ ի յիշատակ նուջեցելոցն ի Քրիստոսուն... մասապ այսպէս եղիցի. Տեղովեցին քահանային ի միասին ի գուռն եկեղեցոյնին... ընդ նոցին և տէր պատարագին, և դիցեն զաղին՝ առաջի սրբյա խաչին... տացեն զաղին օրհնեալ, և զենցին զանառունն, և զբահանայիցին տացեն զահանանեալ մասուննն... և այլովին՝ նախ զբաղցեալին և զիարութեալն կերակրեսցին...»: — Եւ որպէս զի այդ ազգային սովորութիւնն քար զայթակդութեան չւլլայ ակարամանաց՝ կ'արգելու նա եկամուտ և աւելորդ սովորութիւնները. «Եւ զայն» որ ի տղէա քահանայից եկեալ է ի ցուցակին՝ կարմիր արկանելիօք ծածկել զանառունն և յեղինիրոն նարօսն՝ ըստ Հոգին օրինի, ամենինին մի առնէր¹»:

Ի յիշտակ նենցեցից կատարուած մատազն ալ ունի իւր արինաւը հնութեան մէջ. սրբինաւել Ցիկրան թ Արքակունի թագաւոր՝ իր սպաննուած եղրոր Մաժան քրիմակափ համար «Բազմի ի վեռայ գերեզմանին շինեալ(g), զի ի զոհիցն ամենայն անցաւոց վայելեցին», և այս թուի ու միայն յատոկ հանդիսական, այլ և հասարակ օրերու, որպէս զի ամենայն անցաւոր վայելէ, իրբեւ ձրի ճաշարան կամ հիւրանց: — Եւ միթէ այս մատազի մնացորդը չե՞ն այլ և այլ քրիստոնեայ և ոչ քրիստոնեայ ազգաց տեղական սովորութիւններն, զոր օրինակ Յունաց, սրոնց մեռելոյն գերեզմանին վրայ դինի կը թափեն, խաշած ցորեն կը բաժնեն տեղ տեղ, և այլն, կան եւս տեղեր, ուր մէկու

մը մահուընէ ետքը, անոր ընտանեաց իւրաքանչիւրն կը հրաւիրէ ի սեղան իրեն ծանօթ և ազգականները, իրբեւ. Հոգինաց ճաշ ընելու:

Վերագայն բասծնէս յայտնի կ'երեւէ՛ թէ Մատաղի սովորութիւնն ամենելին գատապարանի չէ, միայն թէ քրիստոնէական մոքով և հոգով և առանց զեղծանելու կատարուի. Ե եթէ հման զարբեր է այս, նոյն իսկ մարդասիրական կոչուելի հսութիւնն, անշուշչ շատ մը զեղծմունք եղած են պատճառ անոր զարպարման: Ծնորհալին մեզմէ շատ առաջ անոր օրինաւոր և պատշաճ ըլլալը ցուցած է գրելով. «Նա (Լուսաւորիչն) ոչ ի յանձնէ ես զգասին զենումն զատկին, այլ ի Հոսովմայց ցուցակը եկեղեցոյն ընկալու և աւանդեաց, որպէս և այժմ՝ պատել զգուշութեամբ քան զմեզ՝ առնեն զայր՝ յամենայն եկեղեցիս Փոանկաց. քանի խորսինալ զգամն ի զատկի աւուրն՝ զնեն ի խորանն ընդ պատարական, և յես սուրբ Խորհրդոյն հաղորդելոյ՝ բաժանեն զնա քահանային, և տան իւրաքարանչիւր մասն, և ի նմին իսկ յեկեղեցոյն ուսեն զնա, յառաջ քան զայլ հասարակաց կերակուրս»: — Մաշտոց Ջահեցին, Միարանողաց ժամանակին ու կարգն կը գրէ. «Ի տօննն աւրունականն նաև յամենայն տօնն երեւելին ըստ սովորութեան սմանց՝ ընդունելութիւն և ճաշ զնեն աղքատաց, որ բայ Հայոց մատազն է»:

Թայտնի կ'երեւէ թէ բոլորովին իւրամէ ասարբեր բաներ են Մատաղ, Ազատ, Մաս, վատն զի վերջին երկուքին ծալումը քրիստոնէութեան մէջ փնտուելու է, և ծանօթ է այդ հմանց. իսկ առաջննն, այրինքն Մատազն, զուտ հիմանուսական ծալումն ունի, այլ յետոյ նուիրագործած, քրիստոնէացած է քրիստոնէական կրօնից օժմամբ²:

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

1. Ցիկրան կարողեկու եւս բոլոր եպիսկոպոսաց և վարդապետաց Հայոց հաւանութեամբ գրած պատառխանն մէջ առ կղմէս Զ. Քահանայապետ Հոռոհալոյ նման կը գրէ:

2. Հմիմ. Հիմ Հայատք. — ընդհ. բուղը. շնորհ. — պատմ. Հայ. Զամէ. և այլն: